ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 2334-Ա/2 «08» Դեկտեմբերի 2023 թ.

ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՎ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏՈԿՈՍՈՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՍՏԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջը և առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 5.1.-ի, 69-րդ, 70-րդ 74-րդ և 76-րդ կետերի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել կամավոր ատեստավորման արդյունքում դրույքաչափի փոփոխություն ունեցող և փոփոխված դրույքաչափով հաշվարկվող աշխատավարձի նկատմամբ 5 տարի ժամկետով հավելավճար ստացող անձանց ցուցակները՝ ըստ ցուցաբերած արդյունքների՝

1) 70-79 տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչներին՝ 30 տոկոսի չափով՝ համաձայն հավելված 1-ի.

2) 80-89 տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչներին՝ 40 տոկոսի չափով՝ համաձայն հավելված 2-ի.

3) 90-100 տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչներին՝ 50 տոկոսի չափով՝ համաձայն հավելված 3-ի:

4) 70-79, 80-89, 90-100 տոկոս արդյունք ցուցաբերած ուսուցիչ չաշխատող անձանց՝ 30, 40, 50 տոկոսի չափով՝ համաձայն հավելված 4-ի:

2. Սահմանել, որ դրույքաչափի փոփոխությունը և փոփոխված դրույքաչափով հաշվարկվող աշխատավարձի նկատմամբ կիրառվող հավելավճարները տրամադրվում են՝ սկսած 2023 թվականի հոկտեմբերի 1-ից:

3. Ուսուցիչ չաշխատող անձիք դրույքաչափի փոփոխության և հավելավճարի տրամադրման իրավունքից կօգտվեն՝ աշխատանքի ընդունվելու օրվանից: Տվյալ անձանց համար հավելավճարի տրամադրման հնգամյա ժամկետը հաշվարկվում է ատեստավորումից սկսած:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

11/8/2023

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**